

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության գենդերային քաղաքականության 2011 թվականի միջոցառումների ծրագրի 5-րդ և 6-րդ, 22-րդ կետերի պահանջներով մարզում կատարված աշխատանքների մասին

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Կատարված աշխատանքը	Ֆինանսավորման աղբյուրը
1.	<p>Մարզխորհրդում քննարկել Հայաստանի Հանրապետության 2011թվականի մայիսի 20-ի ՀՀ կառավարության նիստի № 19 արձանագրային որոշմամբ հաստատված «Գենդերային քաղաքականության 2011թվականի միջոցառումների ծրագիրը» մշակել այդ ծրագրի 5-րդ կետի պահանջներից բխող մարզում կատարվելիք աշխատանքների հիմնական ուղղությունները</p>	<p>Մարզխորհրդի նիստերի ընթացքում Ը.Կ.Ե.Ի.Պ.բաժնի կողմից քննարկման է ներկայացվել 2011թ.գենդերային քաղաքականությանն վերաբերվող իրականացվելիք միջոցառումները:Քննարկումներին մասնակից են դարձել համայնքների ղեկավարներ,կրթության,առողջապահության,մշակույթի ներկայացուցիչներ,գործադիր իշխանության տարածքային մարմինների ղեկավարներ,ՀԿ-ներ:Քննարկումներին մասնակիցում էր նաև ՀՀ ՏԿ-նախարարության ներկայացուցիչը:</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվել</p>
2.	<p>Կազմակերպել ՀՀ գենդերային քաղաքականության 2011-2015թթ. Ռ-ազմավարական ծրագրի և ՀՀ գենդերային քաղաքականության 2011թվականի միջոցառումների ծրագրի իրազեկում /հաղորդման ձևով/ Մարզի համայնքներում կազմակերպել քննարկումներ մասնակից դարձնելով համայնքների ղեկավարներին,հիմնական և ավագ դպրոցների տնօրեններին, ինչպես նաև կանանց հիմնախնդիրներով զբաղվող ՀԿ-ներին:</p>	<p>Իրազեկումը կատարվել է համայնքների ղեկավարների աշխատակազմի և դպրոցների մանկավարժական կոլեկտիվների շրջանակներում, ծրագրի ընթերցմամբ: Քննարկմանը մասնակցել են նաև Հ/Կ-ների ներկայացուցիչներ, արդյունքները ամփոփվել է մարզպետարանում:</p>	<p>Ֆինանսավորում չի պահանջվել</p>

3.	ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանում գեներալային հարցերով զբաղվող մշտական մարմնի ստեղծում	ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 17.06.2011թ.թիվ 52-Ա կարգադրությամբ ստեղծվել է գեներալային հարցերով զբաղվող մշտական գործող հանձնաժողով	Ֆինանսավորում չի պահանջվել
----	---	---	----------------------------

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի
Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների
պաշտպանության բաժնի պետ՝

Մ.Գալոյան